ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-10, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

«01» 04 2009թ. N 03/16/1812-09

ՀՀ կառավարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի գյուղական համայնքի հողերի կատեգորիան փոխելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (փաթեթը և քարտեզը կցվում են):

Առդիր՝ 8 թերթ և քարտեզ:

1. Որոշման նախագիծ՝ 3 թերթ,
2. Հանձնաժողովի եզրակացության թերթիկ՝ 1 թերթ,
3. Մարզպետի գրությունը՝ 3 թերթ,
4. ՀՀ Մշակույթի նախարարության գրությունը՝ 1 թերթ,
5. Քարտեզ:

Հարգանքով՝

Վ. Տերտերյան

32

Տեղական ինքնակառավարման
վարչություն, հեռ. 511-344

ՀՀ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄՈՒՏՔԱՅԻՆ
025-1231
01-04-09

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

2009 թվական N ----------Ն

ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1216-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վ. Պտղնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության կատեգորիայի 0.16 հեկտար հողերը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության որոշման նախագծի

ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան հողերի նպատակային նշանակության փոփոխությունը կատարում է ՀՀ կառավարությունը՝ հողաշինարարական փաստաթղթերի հիման վրա:

ՀՀ Կոտայքի մարզի Վ. Պտղնիի գյուղական համայնքի հողերի կատեգորիան փոխելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված է համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության կատեգորիայի 0.16 հեկտար հողերը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման համար:

Նշված համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված սխեման ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել հողային օրենսգրքի /մասնավորապես 6-րդ, 7-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 57-րդ և 64-րդ հոդվածների/ պահանջներին համապատասխան և ՀՀ կառավարության 2001 թ. հունվարի 17-ի «Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» N 30 որոշման 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված կարգով:

Միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացության հիման վրա հողերի օգտագործման ժամանակավոր սխեման համաձայնեցվել և հաստատվել է ՀՀ քաղաքաշինության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ բնապահպանության, ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:

Համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի վերաբերյալ առկա են համայնքի ավագանու որոշումը՝ (սխեմային հավանություն տալու մասին), մարզպետի համաձայնությունը (մարզային հանձնաժողովի եզրակացության հիման վրա) :

Հողերի օգտագործման ժամանակավոր
սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական
հանձնաժողովի նախագահ Վ. Տերտերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱ

Հավելված

22 կառավարության 2009թվականի

....ի..

N .....Ն որոշման

✱ Ծանոթագրություն

① Բնակավայրերի հողեր 0.16 հա,



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 13.08.01 թ. N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի

Հանձնաժողովը 2008 թվականի հոկտեմբերի ......7......-ի նիստում քննարկելով Արագածոտնի...... մարզի Գ. Դպրեվանք համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարվող փոփոխությունների վերաբերյալ նյութերը, առաջարկում է ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավասու նախարարությունների և գերատեսչությունների հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ֆ. Եգորյան

անդամներ՝ Ս. Սկրտչյան

Ս. Ճարարյան

Ա. Վարդանյան

Ա. Ասատրյան

REPUBLIC OF ARMENIA
GOVERNOR OF KOTAYK REGION

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГУБЕРНАТОР
КОТАЙКСКОЙ ОБЛАСТИ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

378550 ք.Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք. Հեռ/Ֆաքս(+374 23) 2 36 63 E-mail marzpetaran@Kotayk.region.am
378550 г. Раздан, Центр, Административное здание. Тел/факс(+374 23) 2 36 63 E-mail marzpetaran@Kotayk.region.am
378550 Hrazdan city, Center, Administrative building. Tel/Fax (+374 23) 2 36 63 E-mail marzpetaran@Kotayk.region.am

13.08.08թ. N 5-99-2889

Ձեր----------

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԽԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

Մեր դրական եզրակացությամբ Ձեր համաձայնեցմանն է ներկայացվում Կոտայքի մարզի Վերին Պտղնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություններ կատարելու առաջարկը:

Հ.ՇԱՀԳԱԼՈՅԱՆ

Կատարող Լ.Պետրոսյան
/հեռ. 0223 2-07-03/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2008թ. N 10/1

գ. ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ

1. ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նիստին ներկա էին ավագանու հինգ անդամներից չորսը

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի պահանջը

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, Վ.Պտղնի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու վերաբերյալ, համաձայն որի համայնքային սեփականության ծածկագիր (032-004) 0,16հա. արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատեսքը տեղափոխել բնակավայրերի հողերի կատեգորիա, բնակարանային կառուցապատման նպատակով:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին Վ.Պտղնի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարված փոփոխությունը Հայաստանի Հանրապետության Կառավարության քննարկմանը ներկայացնելու խնդրանքով:

կողմ – 4 դեմ – 0 ձեռնպահ – 0

1. _____ Ա. Գրիգորյան
2. _____ Ս. Մարտիրոսյան
3. _____ Կ. Մովսեսյան
4. _____ Ռ. Վարդանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա Մ Փ Ո Փ Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող ծածկագիր (032-004) 0,16հա. արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողատեսքը գտնում ենք նպատակահարմար տեղափոխել բնակավայրերի հողերի կատեգորիայի, քանի որ նշված տարածքը որպես տնամերձ հողամաս հատկացված է եղել քաղաքացի Էմմա Խաչատրյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի
պատմության և մշակույթի հուշարձանների
պահպանության գործակալության պետ
պրն Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Զեկուցագիր

Ս.թ. փետրվարի 17-ին ուսումնասիրել եմ Վ. Պտղնի համայնքի տարածքից բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա փոխադրվող 0.16 հա արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքում հուշարձանների առկայությունը:

Պարզվեց, որ նշված հողատարածքը գտնվում է Երևան-Սևան ավտոմայրուղու ձախ կողմում, «Մելինե» սպասարկման օբյեկտի պարսպին կից, և հանդիսանում է 10-15-ամյա այգու տարածք:

Տեղազննմամբ պարզվեց, որ այդ տարածքում պատմամշակութային հուշարձաններ չկան:

Հուշարձանների ու պատմական միջավայրի
պահպանության բաժնի պետ՝ Ս. ՇԱՔԱՐՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅ
ՕԳՏ



ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ Վ. ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
Մ 1 : 5000





ՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՍԽԵՄԱ



Համաձայնեցված է	
ՀՀ տարածք. կառ. նախարար	ՀՀ կառ. առընթեր անշարժ գույքի կադ. պետ. կոմ. 17
ՀՀ բնապահպան. նախարարություն ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ Է ՆԱԽԱՐԱՐ 17. 12	ՀՀ պատմ. և մշակ. հուշարձ.պահպ. վարչ. 10 9
ՀՀ գյուղ. նախարարություն	ՀՀ ____ մարզպետ

N1123



Համաձայնեցված է	
ՀՀ տարածք. կառ. նախարար	ՀՀ կառ. անշարժ գույքի կադ. պետ. կոմ. 17
ՀՀ բնապահպան. նախարարություն 17. 12	ՀՀ պատմ. և մշակ. հուշարձ.պահպ. վարչ.
ՀՀ գյուղ. նախարարություն 22/XII. 08	ՀՀ ______ մարզպետ
ՀՀ քաղշին. նախարարություն 13 2008	

N1123

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ